ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 77-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 6-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի N 6-Ն որոշման 4-րդ կետը, *որոշում եմ՝*

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 6-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ.
1) Փարաքար համայնքի երկու մանկապարտեզների վերակազմավորման արդյունքում Բաժին 09 Խումբ 1 Դաս 1 «Թաիրովի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական կազմակերպություններին՝ 4511 հոդվածի «26200.0» թիվը փոխարինել «9416.310» թվով:
2) Բաժին 09 Խումբ 1 Դաս 1 «Փարաքարի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվի Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական կազմակերպություններին՝ 4511 հոդվածի «47700.0» թիվը փոխարինել «64483.690» թվով: Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցում հունիս ամսվա «23500.0» թիվը փոխարինել «27483.690» թվով, 3-րդ եռամսյակի «35600.0» թիվը փոխարինել «45983.690» թվով :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. _հունիսի_ 21
գ.Փարաքար